

գամանքը տալիս է նրան սուրբ իրաւունք անկապտելի՝ խորտակելու ինչ որ արգելք է հանդիսանում նրա զարգացման:

— Ես անվրդով գիտակցում եմ, որ նախապաշարմունքները՝ հին ճշմարտութիւնների բեկորներն են, իսկ մոլորութիւնների ամպերը, որ այժմ պտղոտ են գործում կեանքի վրա, — այդ բոլորը առաջ են եկած մոխրից այն հին ճշմարտութեանց, որ անխնայ այրուեցին երբեմն նրանց ստեղծող Մտքի վառ բոցերից:

— Ես լաւ եմ գգում, որ յաղթող են ոչ թէ նրանք, որ յաղթութեան պտուղներն են վայելում, այլ որ նրանք, ովքեր անվեհեր ընկնում են կռուով:

— Կեանքի իմաստը ես տեսնում եմ ստեղծագործութեան վեհ ոյժի մէջ:

— Գնում եմ յառաջ, որպէսզի վառուեմ աւելի վառ ու պայծառ, և հրաշէկ ճաճանչ սփռեմ կեանքի խաւարի վրա: Եւ իմ անկումը ինձ համար — իմ վարձատրութիւնը կը լինի:

— Ուրիշ վարձատրութիւն պէտք չէ՛ ինձ. ես տեսնում եմ — իշխանութիւնը՝ աւսօթարբեր է ու ծանծրալի, հարստութիւնը՝ ծանր և յիմար, փառքը՝ նախապաշարմունք, որ առաջ է եկել մարդկանց՝ իրենց գնահատելու անկարողութիւնից և նրանց՝ սուրկօրէն ստորանալու սովորութիւնից:

— Վարանումներ! Դուք — Մտքի կայծերն էք միայն և ուրիշ ոչինչ: Միտքն ինքը իրեն տանջելով՝ ծնում է ձեզ իր ոյժի աւելորդութիւնից և կերակրում ձեզ հէնց իր ոյժով:

— Կը գայ ժամանակ, որ իմ կրծքում մի վեհ, հսկայ ստեղծագործող բոցով ի մի կը ձուլուի գացածունքներս ալ խանդը անմահ Մտքիս հետ և այդ բոցով ես կը վառեմ, կը լուսաւորեմ կոյր հոգիներ, բում բում դրած բոլոր մթութիւնները, դաժանութիւններն ու չարիքները. ես կը նմանիմ այն աստուածներին, որ Միտք են ստեղծել և ստեղծում են!...

Ահա նորից վեհ ու ազատ, բարձր բռնած իր հպարտ գլուխը, նա ընթանում է

զանդաղ, յայց անյողողղ քայլերով, նախապաշարմունքները ոտնատակ տալով, միայնակ՝ մոայլ մոլորութիւնների թանձր ու խաւար մշուշի միջով. նրա ետեւում կանգնած է անցեալի փողին ծանր ամպեր, ինչ, նրա առջեւում — առեղծուածների մի հսկայ, մեծ կոյտ, որ անվրդով սպասում է նրան:

Նրանք անհամար են, որպէս աստղերը երկնի խորքերում, և — անվերջ է Մարդու ուղին:

Այսպէս ընթանում է խոովայոյզ Մարդը — յառաջ և բարձր, միշտ յառաջ և բարձր!...

ազատ թարգմ. Վ. Տ. — ԱՌԲ.

Մ Ի Ա Յ Ն Ա Ի Թ Ի Խ Ն

Յ. Ա. իմ

Ես իրիկուն մը տեսայ դէպ՝ արեւմուտ
Երթան օրուան աստղին՝ սուրբով մը հրանուտ.
Բո՛ւի թըռնոյն, որուն երգին և և էջ
Կը խառնէր զաշնակին՝ մե՛ր հովրոի մէջ.
« Ինչո՞ւ, կ'ըսե՛ս ինձի, ժայնդ դու թըռնու, »
Արեւն է ի՛նձ պէս աբխուր այս իրիկուն.
Ի՛ր հրկընցին մէջ ան լուսնի՛ լոյս, զանձեր
Որ ամենուն սըրտեր կըրնան թափանցել.
Հափուկայն ի՛ր հրկընցին մէջ անի՛
Աստղեր, շողեր, զեփուհ. կապոյտ ալ լուսնի՞»,
Ու պատասխան տրուա թըռնուր ինձի.
« Թէ, բանաստե՛ղծ, հոգիդ ըլլաւ հուրով լի,
Արեգակի նըման, և ի՛ր պէս արքայ
Դառնայիբ, ցաւ կ'ունենայիբ դեռ, հաւատ՝
Մարդիկ՝ խեղճուկ տան մէջ ինչպէ՛ս պաշտին՝
Հոգիւր տեղ ազօտ ճըրազ մը ունին.
Եւ իրենց ցո՛ւն պարզեւել, լացը սակայն
Կըրնայ նըւագ մը մեղմացնել իրիկուան.
Բայց սակեղէն աստղը կապոյտ կամարին՝
Չունի յարգող հրեշտակ, չունի՛ մտերիքի.
Չունի զգաւթ ի՛ր ելքին՝ ծայն մ'որ երգէ.
Իր քայլերուն առաջնորդ մ'ալ զուրկ է.
Քաղցրէկ համբոյր մ'երբեք չեկաւ շըրթուներն,
Որ իր դաժան հոգւոյն մարէր զայրոյնն հին:
Ահա թէ ի՛նչն է պատճառ իր թախծութեան,
Ու թէ ինչո՞ւ աբխուր է այդպէս իրիկուան»:
Alix Moussée

Թրգմ. Հ. Ղ. Բ.